



# ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՎԸ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՐԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԹԵՍԻ

WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: [Prelacy@aol.com](mailto:Prelacy@aol.com) Website: [www.westernprelacy.org](http://www.westernprelacy.org)



## ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ՄԵԿՆԵՑԱԻ ՎԱՏԻԿԱՆ ԵՒ ԱՆԹԻԼԻԱՆ

Թեմիս բարեհնամ Առաջնորդ Բարձր. Տ. Սուլշեղ Արք. Մարտիրոսեան Շաբաթ, 22 Նոյեմբերին մեկնեցաւ Վատիկան, միանալու համար Մեծի Տան Կիլիկիոյ Ա. Աթոռի գահակալ Ն.Ս.Օ.Ս.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի շքախումբին ու մասնակից դառնալու Կաթողիկէ Եկեղեցոյ քահանայապետ Ն. Ս. Պետերիկոս ԺԶ. Պապին Նորին Սուրբ Օծութեան պաշտօնական այցին ու հանդիպումներուն:

Սուտաւորապես մեկ շաբթօնան վրայ Երկարող այս այցելութենեն Ետք, Առաջնորդ Սրբազնը պիտի անցնի Լիբանան, մեր Թեմի պատգամաւորներուն հետ մասնակցելու համար Մեծի Տան Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Ազգային Ընդհանուր Ժողովին, որ պիտի կայանայ 2Էն 6 Դեկտեմբերին, Կաթողիկոսութեան մայրավանքի յարկին տակ: Նշենք, որ մեր Թեմը 15 պատգամաւոր ունի այս ժողովին, որ ընթացիկ աշխատանքներու արդիւնքին քննարկումն անդին, օրակարգի վրայ ունի մեր Եկեղեցին, սերունդները եւ հայրենիքը յուրզող անմիջական հարցեր:

Առաջնորդ Սրբազնը Թեմ պիտի վերադառնայ Ազգ. Ընդհանուր Ժողովի աւարտին Ետք: Անոր բացակայութեան շրջանին, Թեմիս Կրօնական Ժողովի ատենապետ Գերաք. Տ. Միւռոն Տ. Վրդ. Ազնիկեանի Վստահուած Է Ազգ. Առաջնորդարանի անմիջական աշխատանքներուն հետեւելու ու հարցերու յանձանձման աշխատանքը:

## PRELATE DEPARTS FOR THE VATICAN AND LEBANON

On Saturday, November 22<sup>nd</sup>, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, departed for the Vatican to join the delegation of H.H. Aram I, Catholicos of the Great House of Cilicia, on an official visit to H.H. Pope Benedict XVI.

Following the weeklong visit, the Prelate will head to Lebanon for the Catholicosate General Assembly which will take place from December 2<sup>nd</sup> to the 6<sup>th</sup> in Antelias. The Western Prelacy has fifteen delegates at the Assembly.

In the Prelate's absence, Religious Council Chairman Very Rev. Fr. Muron Aznikian has been assigned to oversee the daily operations of the Prelacy.

\*\*\*

## Ս. ՊԱՏԱՐԱԳ ԱՉԳ. ԱՌԱՋՆՈՐԴՈՂԱՆԻ ՄԱՏՐԱՆ ՄԵԶ

Հարաթ, Դեկտեմբեր 6-ին, երեկոյեան ժամը 6-ին, Ս. Եւ Անմահ Պատարագ տեղի պիտի ունենայ Ազգային Առաջնորդարանի Ս. Տրդատ Եւ Ս. Աշխեն Մատրան մէջ:

Պիտի պատարագէ Եւ յաւուր պատշաճի պիտի քարոզէ Փասատինայի Ս. Սարգիս Եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Արք. Տ. Խորեն Զինյ. Պապօշեան: Երգեցողութիւնը պիտի կատարեն Երիտասարդականի խումբը:

Կը հրաւիրենք մեր հաւատացեալ ժողովուրդը Եւ յատկապես Երիտասարդութիւնը Ներկայ ըլլալու հոգեպարար արարողութեան:

## DIVINE LITURGY AT THE PRELACY CHAPEL

On Saturday, December 6<sup>th</sup>, Divine Liturgy will be celebrated at the Prelacy St. Dertad and St. Ashkhen Chapel. Services begin at 6:00 p.m.

The celebrant is pastor of St. Sarkis Church Rev. Fr. Khoren Baboochian.

Members of the youth choir will participate in the services.

\*\*\*

## ԱՐՅԱՆԻ ՆԱԽԱԳԱՅ ԲԱԿՕ ՍԱՐԱԿԵԱՆ ԱՅՑԵԼԵՑ ԱՉԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ

Երեքաթի, 25 Նոյեմբերի յետմիջօրէին Ազգային Առաջնորդարան այցելեց Արցախի Նախագահ Բակօ Սահակեան Եւ ընդունուեցաւ Թեմիս ժողովականութեան ու կրթական համակարգի Ներկայացուցիչներու կողմէ:

Նախագահը Լու Անձելը ժամանած Եր Ներկայ ըլլալու «Հայաստան»

Համահայկական Հիմնադրամի հանգանակային արշաւին՝ Թելեթոնին:

Յարգոյ Նախագահին կ'ընկերանային Արցախի Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Պարգեւ Արք. Մարտիրոսեան, Ուաշինգթոնի մօտ Արցախի Ներկայացուցիչ Վարդան Բարսեղեան Եւ այլ պաշտօնատարներ:

Նկատի ունենալով, որ Առաջնորդ Սրբազնը՝ Բարձր. Տ.

Մուշեղ Արք. Մարտիրոսեան, յատուկ առաքելութեամբ Վատիկան կը գտնուեր, մաս կազմելու համար Կաթողիկէ Եկեղեցւոյ քահանայապետ Նորին Սրբութիւն Պենետիկոս Ժ2. Պապին հետ Ն.Ս.Օ.Ս.Ս. Արամ Ա.



Կաթողիկոսի հանդիպումներուն, հիւրընկալումը գլխաւորեց Մեծի Տան Կիլիկիոյ Միաբանութեան Երեց անդամներէն Բարձր. S. Եփրեմ Արք. Թապագեան: Անոր կողքին կը գտնուեին Ազգային Կեղրոնական Վարչութեան անդամ Տիար Խաժակ Տիքինեան, Թեմիս Կրօնական Ժողովի ու Ազգային Վարչութեան անդամներ, Ազգային Վարժարաններու Խնամակալ Մարմինի Ներկայացուցիչը, Վահան Եւ Անուշ Շամլեան Ազգային Վարժարանի տնօրէնը եւ Ազգ. Առաջնորդարանի Տիկնանց Օժանդակ Մարմինի անդամներ:

Ողջունելով յարգելի հիւրերը, Եփրեմ Սրբազան նախ իրաւիրեց Յոզ. S. Պարթեւ Վրդ. Կիւլիմեանը, որպեսզի ընթերցէ Առաջնորդ Սրբազանին ողջոյնի խօսքը: Իր գրաւոր պատգամին մէջ, Առաջնորդ Սրբազանը կ'ողջուներ յարգելի հիւրերը, որոնք Լու Անծելըս Եկած են «Յայաստան» Յամահայկական Յիմնադրամի թելեթոնին հայրենաշէն առաքելութեամբ ու կը Վստահեցնէր, որ ողջ հայութիւնը կը կանգնի Արցախի կողքին, անոր ապահովութեան ու Վերականգնումի գործին մէջ:

Եփրեմ Սրբազանը, իր կարգին, ողջունեց հիւր նախազահն ու Արցախի Թեմի Առաջնորդ իր հոգեւոր Եղբայրը, գոհունակութիւն արտայայտեց, որ Արցախի նախազահը ահաւասիկ Երկրորդ տարին ըլլալով կ'այցելէ Ազգային Առաջնորդարան:

Ողջոյնի խօսք արտասանեցին նաեւ Տեարք Խաժակ Տիքինեան, Ազգ. Վարչութեան փոխ ատենապետ Տիար Կարօ Աւագեան եւ Կրօնական Ժողովի ատենապետ Գերա. S. Միւռու Ծ. Վրդ. Ազնիկեան:

Արցախի Առաջնորդ՝ Պարգեւ Սրբազան շնորհակալութեան ու գոհունակութեան արտայայտութիւն ունեցաւ: Ան յատկապես գոհունակութիւն արտայայտեց, որ կը գտնուի ազգային այս յարկին տակ, եւ ըսաւ՝ թէ Արցախը կը վայելէ ազգի զօրակցութիւնը:

Պաշտօնական հանդիպումին եզրափակիչ խօսքը արտասանեց նախազահ Բակօ Սահակեան: Ան շնորհակալութիւն յայտնեց Առաջնորդ Սրբազանին խօսքերուն ու Մեծի Տան Կիլիկիոյ Կաթողիկոսութեան զօրակցական կեցուածքին համար:

Յարգելի հիւրերուն յանձնուեցան յուշանուերներ:

Հանդիպումի պաշտօնական բաժիննեն Ետք, տեղի ունեցաւ հիւրասիրութիւն, զոր կազմակերպած Եր Ազգ. Առաջնորդարանի Տիկնանց Օժանդակ Մարմինը:

## PRESIDENT BAKO SAHAKYAN VISITS THE PRELACY

On the afternoon of Tuesday, November 25<sup>th</sup>, President of Nagorno-Karabakh His Excellency Bako Sahakyan paid an official visit to the Prelacy. The President was accompanied by H.E. Archbishop Barkev Mardirossian, Prelate of Artsakh, Nagorno-Karabakh representative in Washington Mr. Vartan Barseghian, and officials. Given that H.E. Archbishop Moushegh Mardirossian is currently at the Vatican as part of the delegation of H.H. Catholicos Aram I for a visit with H.H. Pope Benedict XVI, the President and officials were welcomed to the Prelacy by H.E. Archbishop Yeprem Tabakian, Central Executive

member Mr. Khajag Dikijian, Religious and Executive Council members, Board of Regents members and principals, and Ladies Auxiliary members.

The visit began with Archbishop Tabakian inviting Very Rev. Fr. Barthev Gulumian to deliver the Prelate's remarks. In his written statement, the Prelate welcomed the guests who are in Los Angeles ahead of the Armenia Fund Telethon, and reaffirmed the support of our community to the progress of Artsakh. Archbishop Tabakian then welcomed the President and guests, and reiterated that the Diaspora is committed to the development and advancement of Artsakh.

In his welcoming remarks, Mr. Dikijian stated that collaboration with Armenia and Artsakh will surely be on the agenda of the upcoming General Assembly of the Catholicosate of Cilicia in which he will participate. Remarks were also offered by Very Rev. Fr. Muron Aznikian and Executive Council Vice-Chair Mr. Garo Avakian.



Archbishop Barkev Mardirossian conveyed his thanks and appreciation for the welcome and for the expressions of support. He asserted that the liberation of Artsakh two decades ago was due to the collective support of all Armenians, stating that the same is needed for the successful realization of all future endeavors. He concluded that we must defend and strengthen Artsakh and prove

that we are faithful in our responsibilities so that God will grant us even greater opportunities.

Concluding remarks were offered by President Sahakyan. He began by expressing thanks for the Prelate's remarks and for the staunch support of the Catholicosate of Cilicia. He stated that during his visit to the Prelacy last year, he had the chance to report on anticipated projects and now is an opportunity to discuss those projects with the Diaspora representatives and have their input for the implementation. He stated that Artsakh is still faced with the healing of old wounds and subsequently the general advancement of the country, and expressed confidence that the country will overcome these challenges because of the backing of all Armenians. He concluded by urging all Armenians to remain united in the safeguarding and rebuilding of our homeland and to visit Artsakh as it is their home as well.

At the conclusion of the official visit, the President and guests were presented with mementos. A reception organized by the Ladies Auxiliary followed.

\*\*\*

## **ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ Ի ՊԱՏԻՒ ՆԱԽԱԳԱՅ ԲԱԿՕ ՍԱՀԱԿԵԱՆԻ ԵՒ ՍՓԻՌՈՔԻ ՆԱԽԱՐԱՐՈՒՅԻՆ ՀՐԱՆՈՅԾ ՅԱԿՈԲԵԱՆԻ**

Երեքաբթի Նոյեմբեր 25-ի երեկոյեան, յատուկ ընդունելութիւն մը տեղի ունեցաւ ի պատիւ Աղցախի նախագահ Բակօ Սահակեանի եւ Հայաստանի կառավարութեան անդամ՝ Սփիռոջի հարցերու նախարարութի Յրանոյշ Յակոբեանի: Երեկոն կազմակերպուած էր «Հայաստան» Համահայկական Հիմնադրամին կողմէ, հիւրընկալութեամբ Տէր եւ Տիկին Յակոր եւ Յիլտա Պաղտասարեաններուն: Յանուն Առաջնորդ Սրբազն Յօր, Արժ. Տ. Վազգեն Քիևյ. Արմաճեան ներկայ եղաւ ձեռնարկին:

### **RECEPTION IN HONOR OF PRESIDENT BAKO SAHAKYAN AND MINISTER OF DIASPORA AFFAIRS HRANUSH HAKOBYAN**

On the evening of Tuesday, November 25<sup>th</sup>, a reception in honor of President of Nagorno-Karabakh H.E. Bako Sahakyan and Minister of Diaspora Affairs Hranush Hakobyan took place at the home of Mr. and Mrs. Hacob and Hilda Baghdasarian.

The reception was organized by Armenia Fund.

Rev. Fr. Vazken Atmajian represented the Prelate at the event.

\*\*\*

### **ՄԻԶԻՆ ԱՐԵՒԵԼԵԱՆ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԽՄԲԱԿՆԵՐՈՒ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ**

Շաբաթ, 22 Նոյեմբերի առաւօտեան, Միջին Արեւելքի Ուղղափառ եկեղեցիներու՝ Յայ, Ղըպտի եւ Ասորի քոյր եկեղեցիներու երիտասարդաց կազմերէն աւելի քան 75 երիտասարդ երիտասարդութիւններ համագումար մը ունեցան Լու Անճելոսի Մերձակայ Պալտի լեռնային շրջանին մէջ, ուր շինչ եւ հաճելի մթնոլորտի մէջ տեղի ունեցաւ հաւաքական աղօթք եւ գործադրուեցաւ դաստիարակչական ծրագիր:



Քափիլան Արքեպիսկոպոսը, եւ Ղըպտի

Համագումարը կը վայելէր հովանաւորութիւնը Արեւելեան Ուղղափառ եկեղեցիներու Առաջնորդներու խորհուրդին, որուն մաս կը կազմէն Յայ Առաքելական Եկեղեցւոյ Առաջնորդները՝ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան եւ Գերշ. Տ. Յովսան Արք. Տերտերեան, Ասորի Ուղղափառ Եկեղեցւոյ Ամերիկայի Առաջնորդ Գերշ. Տ. Եղիշին Ուղղափառ Եկեղեցւոյ Ամերիկայի

Առաջնորդ Գերշ. Տ. Մերաբիոն Արքեպիսկոպոսը:

Օրը սկսաւ աւագական աղօթքով, վարիչ հոգեւորականներուն՝ Գերապ. Տ. Միւրոն Ծ. Վրդ. Ազնիկեանի, Արք. Տ. Աւետիս Քինյ. Արովեանի եւ ճու Քինյ. Միքայելի առաջնորդութեամբ: Երիտասարդաց խմբակներ իրենց մայրենի լեզուներով շարականներով մասնակցեցան արարողութեան:

Միջ-թեմական երիտասարդաց յանձնախումբի անունով, Օրդ. Սոֆիա Ալաֆ Ներկայացուց քոյր Եկեղեցիներու երիտասարդաց խմբակներու նպատակը, ինչպէս նաեւ խօսեցաւ կատարուած աշխատանքներու, ապագայ ծրագիրներու մասին, մանաւանդ շեշտեց Արեւելեան Ուղղափառ Եկեղեցիներու միատեղ գործակցութեան անհրաժեշտութիւնը՝ բոլոր մակարդակներու եւ մարգերու մէջ: Ապա երիտասարդներ երեք խումբի բաժնուեցան եւ հոգեւոր վարիչներու առաջնորդութեամբ անդրադարձան երեք Եկեղեցիներու պատմական, աստուածաբանական եւ դաւանական հիմունքներուն, եւ ուսումնասիրեցին ու տեղեկացան Տիեզերական առաջին երեք ժողովներուն բիւրեղացած վարդապետական ուղղափառ առաքելական հաւատամքին:

Զննարկումներէ ետք, տեղի ունեցաւ հաւաքական ճաշ: Ապա երիտասարդներ մասնակցեցան դաստիարակչական բնոյթով ընկերային խաղերու:

Միօրեայ միջ-թեմական երիտասարդաց հաւաքին փակման աղօթքը կատարեց Ասորի Եկեղեցւոյ երիտասարդաց վարիչը՝ ճու Քինյ. Սայիֆ: Խոկ Ս. Ալաֆ փակման իր խօսքով շնորհակալութիւն յայտնեց երիտասարդաց խմբակներուն, հաւաքը կազմակերպող յանձնախումբին եւ բոլոր մասնակցողներուն, շեշտելով կարեւորութիւնը նման հաւաքներուն միատեղ գործելու եւ գործակցելու պատրաստակամութիւնը:

## ORIENTAL ORTHODOX CHURCHES YOUTH GATHERING

On the morning of Saturday, November 22<sup>nd</sup>, over seventy-five youth from the Armenian, Coptic, and Syriac Orthodox Churches gathered at the

Angeles National Forest at Mt. Baldy for a day of prayer, workshops, and social activities. The event was held under the auspices of the Council of Oriental Orthodox Bishops which is comprised of H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, H.E. Archbishop Hovnan Derderian, Primate, H.E. Archbishop Mor Clemis Eugene Kaplan (Syriac Orthodox Church), and H.G. Bishop Serapion (Coptic Orthodox Church). The gathering was organized by the

OOC Youth Delegates Committee.



The day began with morning prayers led by Very Rev. Fr. Muron Anizkian, Rev. Fr. Avedis Abovian, and Fr. John Mikhail, after which youth from each church sang hymns in their respective languages.

In her welcoming remarks, Chairlady of the OOC Youth Delegates Committee Sophia Allaf gave a brief background on the delegates committee and its endeavors and mission, then introduced the committee members. The youth were then divided into three groups for the workshop session. One clergy member was assigned to each group to lead a discussion on the topic of the day which was the history of the Oriental Orthodox Churches included the three Ecumenical Council accepted by the churches, the similarities between the Oriental Orthodox Churches, and the differences between the Oriental and Eastern Orthodox Churches.

At the conclusion of the workshop, the youth gathered for lunch over which the discussions continued. After lunch the youth participated in educational and social activities.

Closing prayer was led by Fr. John Saif, Youth Director of the Syriac Church. Fr. John thanked God for His blessings and for granting the opportunity for the youth from the three churches to come together, reiterating that we are one church with one heart.

Closing remarks were offered by Sophia Allaf who thanked the delegates for their hard work and efforts in the planning of the gathering, and thanked the youth for their participation.

\*\*\*